ԱՄՍԱԳԻՐ

ԲԱՆԱՍԻՐԱՑՈՒՆ

ՀԻՆ ՀԱՅՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՏԱԽՈՒՃԵՑՈՑ

ՐԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԵՂՕԹԻՑ

ԱՄՓԱԿՈՒՄԱՑ ՄԱՐԳԱՐԻԻ

(Շարունակութիւն)

,,Ի մէջ երկուց կենդանեաց ծանիցիս զու. 'ի մերձենալ ամացն յայտնեսցիս, և 'ի հասանել ժամանակին երևեսցիս,,։

Ընդ այս է զարմանալի գործն, և զարհուրելի լուրն։ 'Նախ' 'ի մէջ Հօր և Հոգւոյն սրբոյ է զնա իմանալ. զի Որդի կայ ընդ աջմէ Հօր, և Հոգին սուրբ կայ ընդ աջմէ Որդւոյ. զի նա ծանուցաւ մարմնով մինն 'ի սրբոյ Երրորդութենէն յայտնեալ աշխարհի, զի տեսանել կարասցեն զանտանելին։ Իսկ Հայր և Հոգին ընդ նմա էին կամօք, բայց ոչ տեսեալ եղեն վասն անմարմնութեանն։

,,ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու,,,

Գարձեալ՝ ի մէջ հրեշտակաց և մարդկան, յերկոցունց պաշտեցեալ և երկրպագեալ: Գարձեալ՝ ի մէջ Աարգարէից և Ընտրելոց, յոմանց նախատապատուութեամբ Հոգւոյն Ծանուցեալ, և յոմանց յայտնապէս և մարմնաւոր աչօք և ականջօք տեսեալ և լուեալ. վասն որոյ և երանեցան իսկ: Գարձեալ՝ ի մէջ օրինացն և աւետարանիս, յերկոցունց մի Ընտուած քարոզեալ և փառաւորեալ: Գարձեալ՝ ի մէջ Եգիպտոսի և Բաբելոնի. զի նա եհան զԻսրայէլ Եգիպտոսէ վասն առաքինութեան տանն Աբրահամու, և նա մատնեաց զնոսա Բաբելացւոյն վասն մեղաց իւրեանց: Գարձեալ՝ ի մէջ Երուսաղէմի և Սամարիայ, ուր երկու թագաւորութիւնք բաժանեցան. տասն ազգն՝ ի Սամարիա, և երկու ազգն Յերուսաղէմ ունէին աթոռ թագաւորութեան. և լինէին անխափ առ երկոսին մարգարէք՝ վասն ծանուցանելոյ զգալուստ և զկաց Աիածնին: Գարձեալ՝ ի մէջ Աարիամու և Յովսէփայ՝ Հաստատ ծառայելոյ կուսութեամբ ծանուցեալ և ծնեալ և սնեալ: Գարձեալ՝ ի մէջ հին քահանայութեան և նորոյն, յոմանց ստուերիւ և առակօք պաշտեցեալ, և յոմանց ճշմարտութեամբ կատարելագունիւ: Գարձեալ՝ ի մէջ Հրէից և հեթանոսաց, վէմ ընտիր և գլուխ անկեան եղեալ հաւատացեալ ժողովրդոց:

Այլ իսկ և ճշմարտութեամբ՝ ասացեալ է Աարգարէին զայս վասն մեծի Ուրբաթոյն երկիւղալի և զարմանալի աւուրն, յորժամ առաջի երկնի և երկրի դատեալ զԱրարչն տիեզերաց՝ կախեցին՝ ի մէջ երկուց չարագործաց զփայտէ: Օ, ի խաչիւ վասն այնորիկ սպանին, զի մի՛ ոք խաչելոյ երկիրպագանիցէ. զի յօրէնքն գրեալ էր. ,, Անիծեալ է ամենայն որ կախեալ կայցէ զփայտէ,,: Այլ նա զարուեստիւն նոցա մեզ՝ ի բարիս շրջեաց. զի գնեաց զմեզ յանիծից օրինացն, և օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ: Այսպիսի չար կամաք և՝ ի

մէջ աւազակաց դատապարտեցին, զի իբրև զմի ՚ի նոցանէ կարծիցի, և նոցա գործոյն կցուրդս: Այլ նա՝ ըստ Մարգարէիս՝ ճանուցաւ, և ոչ թագուցաւ Աստուածութիւն նորա ՚ի մէջ ձեռակապացն: Օվ ի վան նմա խաւարեցաւ արեգակն հանդերձ լուսնիւ և ամենայն աստեղօք. շարժեցաւ և դողայ երկիր, և հիմունք լերանց ասասանեցան և խառնեցան՝ ըստ Մարգարէին, զի բարկացաւ ՚ի վերայ Հրէից Աստուած: Օր Գրիգոր Աստուածաբանն ասէ. ,,Յոլովագոյն են այնր ժամու սքանչելիք,, : Եւ թէ զի՞նչ իցեն, ասէ. ,,Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ և դարձեալ լուսաւորեալ,,. որպէս գրեաց Օ.աքարիա Մարգարէն. ,,Օր մի լինի, ասէ, և նա յայտնի Տեառն. ոչ աիւ իցէ և ոչ գիշեր, և ընդ երեկս լոյս լեցի,, : Եւ այս եղեալ՝ ճանուցաւ թէ ի է նա. նա է՝ վասն որոյ ասաց Յոբ''. Ասէ արեգական՝ և ոչ ծագէ, և ընդդէմ աստեղաց կընքէ, և զաիւ ՚ի գիշեր մթացուցանէ: Վասն որոյ ասէ.

,,Ի մէջ երկուց կենդանեացն,,.

Օր որ միւս Թարքմանն ,,՚ի մէջ երկուց գազանացն *,, ասէ: Օվ ստուգապէս իբրև զդազանս ՚ի լերինս շրջէին, և պատառէին զրս գոանէին ՚ի ճանապարհորդաց և յանապատիկ ապանց: Կատարեցաւ Գրին, թէ ընդ անօրէնս համարեցաւ. զի ինքն արդարացոյց զբանս ծառայից իւրոց Մարգարէից՝ ընդվզ և կատարելով զնոսին:

,,Ի մերձենալ ամացն յայտնեացիս,,.

Վեհասուրբ Հոգին՝ որ յայտնեաց զգալուստ և զմարդեղութիւն Որդւոյ, յայտնեաց և զժամանակն Դանիէլիւ Մարգարէին, զի գրեալ է. ,,Ո՛չ առնէ Տէր Աստուածի իբրև բնչ, եթէ ոչ յայտնէ զխորհուրդս յուրոյն ծառայից իւրոց,, : Որդ՝ ասէ Դանիէլ. ,,Յետ վաթսուն և երկուց եօթնեկոցդաց, ասէ,

* Այսպէս է և եղեալ Աստուածաշնչի տպ. ՚ի Վենետիկ յամին 1805:

դադարեսցեն օձեալքն ՚ի բէից, և երևեսցի օձեալն Աստուծոյ ՚ի վերայ երկրի՝՝. որպէս և եղև իսկ: Օձի ՚ի բէից թագաւորքն և օձեալքն պակասեալք էին ՚ի Փրկչին գալստեանն, և ՚ի ներովդէս այլազգի ունէր զթագաւորութիւնն ՚ի բէից, որպէս ասէ.

՝՝Ի մերձենալ ամացն յայտնեսցիս, և ՚ի ժամանակին երևեսցիս՝՝:

Նայց այլ թարգմանքն ասեն. ՝՝՚Ի վէջ ամաց կենաց մեր կենդանացո՝՝. այսինքն թէ ՝՝մեր ժամանակօքս և մեր մարգարէից կենօքս կատարեա և կենդանացո զքանս զայս՝ զոր առնելոց ես՝՝: Նմին և Մարգարէք ՚ի գալստեան Տեառն, ծերունին Սիմէոն, և Աննա մարգարէուհին յազգէ Ասերայ, և Զաքարիա՝ հայրն Յովհաննու, և Ներսէսարէթ, և ապա Յովհաննէս Մկրտիչ:

՝՝Ի մերձենալ ամացն յայտնեսցիս՝՝:

Յորժամ մերձեցաւ ՚ի դէպ և պատեհ ժամանակն, յորում մերձեալ էին ամենեքեան ՚ի կորուստ, և ՚ի վշտի և ՚ի տառապանս կայր բնութիւն մարդոյս. և եհաս Տէր ՚ի կարեաց աւուր՚ի թիկունս օգնականութեան. զոր Ղուկաքն ասէ ՝՝Յորժամ եկն լրումն ժամանակին, առաքեցաւ Աստուածորդին՝՝. որպէս թէ քաղեալ էր լոյս բարեացն ՚ի մարդկանէ, և պիշեր անհաւատութեան և մեղաց տարածեալ, յորժամ երևեցաւ արեգակն ՚ի բարձանց լուսաւոր առնել զհաւատս մեր, որք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու նստէաք, ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան:

՝՝Ի խոռվիլ անձին իմոյ ՚ի ժամանակի բարկութեան զղջմունքիւն յիշեսցես՝՝:

Խռովիլն՝ շարժիլն է և սասանիլն. որպէս Դանիէլ ասէր ցհրեշտակապետն. ՝՝Յերևիլդ քո, ասէ, խռովեցաւ փոր իմ, և չմնաց յիս զօրութիւն ուժոյ՝՝: Անձն և փոր՝ զհոգին

կոչեն Մարգարէքն. զի որպէս ՚ի փորի կացեալ իւրք ծածուկ և անյայտ է, սոյնպէս և հոգիս մեր աներևոյթ է և ծածուկ. և խոովի ոգի յահաւոր ինչ տեսլենէ. որպէս և Ամբակում տեսեալ զԱստուած խոչեալ և ՚ի հողոյ դատաստպարտեալ, խոովեալ սասանի ընդ նորաքանչ տեսիլն. յոր արևգակն և լուսին չկարացեալ հայիլ խաւարին՝ մթասպատ եղեալք։

(Մնայորդն ՚ի յաջորդ թերթիւ)

ՆՈՐ ՀԱՐԱՐԻՐՆՕՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԻՒՏԻ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՆՇԽԱՐԱՑ

Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՀԱՆԴԵՐՁ ՔՆՆՈՒԹԵԱՄԲ

—

Երիցս երանեալ Ընտաքեանման մեծ Հայրապետան և Լուսաւորչին Հայաստանեայց՝ սուրբն Գրիգոր, յետ վերջին ճօթնամեայ առանձնութեանն ՚ի Անապատ լերին [1] *(որ Մանէայ այրք և կոչեցեալ էր* [*]*), առաքինահրաշ վարուք զինր երկրաւոր կե-*

---

[1] ,,Ի սորա (այսինքն՝ Եպիփանու Առաջնորդի) տան ամին եկն սուրբն Գրիգոր ՚ի Գլակայ վանան, եկայ յԱշտիշատ բլուրն առ Անտոն և կրօնիդէս չորս ամիս։ Եւ նորա հաննալ զնա անտի առելով. Գնա՛ յանապատ յանմարդաբնակ տեղիս, զի մի ոք փառասիրութիւն մատուցանէ քեզմ սրբութեանդ։ Իսկ նորա գնացեալ ՚ի Մանէայ այրան, և կացեալ անդ ամն ճօթն, վախճանի ՚ի կենացս ՚ի փառս Աստուծոյ (Ցովհ. Մամիկ. ՚ի պատմ. Տարոնոյ. գլ. ա)։

[*] Մանէայ այրէ կոչեցեալ էր այն պատճառաւ, որ այն սարի քարանձաւներէն մինչեւ յընկերաց Հռիփսիմեանց, ըստ գրելոյ Խորենացւոյն (գիրք Բ. գլ. ղա)։ Ցովհաննէս վարդապետն Երզնկացի, և յետ նորա այլ մատենագիրք յիշեալ են զայս լեառնս՝ Սեպուհ անուամբ, թերևս ՚ի պատճառս սեպա-

նաց կէտը լցուցանելով՝ վերատեսաւ առ անձկալին իւր Քրիստոս՝ ժառանգելու ղյաւէժական փառաց անթառամ պսակը՝ ի փոխարէն իւր Ընտրեալական՝ Մարտիրոսական՝ Հայրապետական և Հզնաւորական բաղմարդիւն վաստակոց: Խաչնարածքն (ոչխար արածող հովիւքն)՝ որք հօթն անձինք էին՝ դտանելով ընորա մարմինը գէ կամ գէհէ (Տաճկերէն արտրմ՛) անուանեալ ծառոյ փորուածի մէջ, ըստ ոմանց՝ նստած, և ըստ այլոց՝ կանգուն, ալ ձեռնը դէպ՝ ի գլխակողմը ուղղած, և ձախ ձեռնուամբը գաւազան բռնած, բայց չգիտելով թէ որոյ է՝ թաղեցին մի դարակի (բլրակի) ստորոտումը* իւր իսկ աղբատին հանդերձիւքն (շորերովն), և վերայն գմբէթաձև շինուած կանգնելով զայն ևս մանրախիճ քարերով ծածկեցին, որ յանձրևէ և՝ ի ձիւնէ անվնաս մնայ [2]:

Յետ ժամանակաց, գառնիկ անուն Հզնաւոր ոմն՝ ի Խաչէն գաւառէն, Ընձիկ՝ կամ ըստ այլոց՝ Այրնիկ գիւղէն, ըստ յայտնութեանն որ եղև նմա՝ ի տեսլեան՝ գնաց առաւ զայն սուրբ մարմինը, և տարաւ թաղեց Թորդան գիւղումը, այն պարտիզի մէջ՝ որ նոյն իսկ երջանիկ Հայրապետի զբօսանոցն

ձև (սրածայր) բարձրութեան. բայց նախկին անունն թէ ինչ էր՝ չէ յայտնի: Տես՝ ի Հին Հայաստ. էջ 4:

* Այս տեղս՝ ի սկզբանէ անտի ուխտատեղի եղած էր մեր ազգիս. ուր և տաճարորդ դարուամբ Ցովհաննու Ջ. Պատմչեան Կաթողիկոսի հրամանաւ քարաշէն եկեղեցի կանգնեցաւ. և նա ինքն Ցովհաննէս Կաթողիկոսն գնացած տեսած էր զայն ուխտատեղին, ինչպես յայտնուած է իւր Պատմագրութեան մէջ (յէջ 156. ըստ տպագր. Մոսկ.) այսպէս գրելով. ,, Առի հող օրհնութեան և՝ ի փլուզեալ դարակէն. յորում պատուական գանձն Հոգևոր (մարմինն Լուսաւորչի) ՝ի հովուայ էր ծածկեալ. յորոյ վերայ շինեալ էր եկեղեցի նախ քան զայս խնամ հրամանաւ՝ ի մահարձանաց ինչ կրով ձուլածոյ ,, :

[2] Վարդան՝ ի Պատմ. (էջ 50. ըստ մեր ձեռագրի): Ի Ներսէզ Լուսաւորչի (գիա. ՝ի Սոփ. Հայկ. Հատ. Ե. էջ 76): Ցովհ. Կաթող. ՝ի Պատմ. (էջ 25. ըստ տպագր. Մոսկ): Ի Ցայտնու. (Սեպտ. 30. և Նոյեմ. 18): Ի Պատմ. վարուց մեծին Ներսիսի (՝ի Սոփ. Հայկ. Հատ. Ջ. էջ 9. 10):

էր [5], և կամ (ինչպէս Վարդան պատմագիրն է ասում) 'ի ներքոյ հիման 'ի նմանէ չինեալ եկեղեցւոյն [4]։

Թէ երբ եղև այս՝ ճշդիւ ըստ տալեանն որոշել չէ կարելի. այլ միայն գուշակողական կարծեօք կարելի ասել՝ թէ եղած է յորորդ դարու երկորդ կիսում, կամ յառաջ քան զՀինգերորդի մուտը։ Նոյնպէս և ոմանք, ընդ որս և Կիրակոս Գանձակեցին [5], համարում են՝ թէ եղած է յաւուրս Օհնանի կայսեր Յունաց՝ որ թագաւորեց հինգերորդ դարու վերջերում, յամին 474 ի 490. բայց այս կարծիքս՝ եթէ ինամով ինձ քննելի՝ ընդդէմ ելանէ ստոյգ ժամանակագրութեան։ Վասն զի Ստեփաննոս Տարեւնացին՝ որ գ՚այոց պատմութիւնը գրեց համարեա թէ նոյն ժամանակներում *, զնոյն իսկ փոխադրութիւնը մարմնոյն Լուսաւորչի 'ի Թորդան ձեռամբ Գառնիկ ճգնաւորի՝ պատմում է ոչ իբրև նոր՝ կամ իբր ժամանակի անցք, այլ իբրև յառաջուց կատարուած գործ [6]։ Նայ յայտնի է, փաւստոս Բուզանդ պատմիչն՝ որ մեծին Տրդատայ ժամանակներումն էր (մի ամբողջ դարով յառաջ քան զՏարեւնացին և զՕհնոն), գրում է թէ ,,Հրիմ հանգստեան մե-

---

[3] ,,Իսկ ապա զկնի բազում՝ ամաց գտանէ զսուրբ մարմին նորա (Լուսաւորչի) Գառնիկ ոմն ճգնաւոր Աստուածային իմն գոգիւս տեսչութեամբ, և տարեալ դնէ զնա 'ի գեօղն Թորդան յիւր իսկ 'ի ջբօսանոց պարտիզկանն (Ցովհ. Կաթող. 'ի պատմ. էջ 25. 26)։

[4] ,,Ի տեսլեան յայտնեցաւ Ճգնաւորի ումեմն՝ զի տարցէ զնա գաղտ և ծածկեսցէ 'ի ներքոյ հիման եկեղեցւոյն Թորդանայ, զոր ես ասէ չինեցի։ Եւ կայ անդէն (առ ժամանակ մի) անյայտ,, ('ի պատմ. էջ 51)։

[5] ,,Յաւուրս սորա (Օհնոնի) եգիտ Գառնիկ երանելի զնշխարս սրբոյն Գրիգորի 'ի յայրն Մանէայ, և հանդուցին 'ի Թորդան ('ի պատմ էջ 21. 22)։ Տես և 'ի բառարանի Յաւուրց անուանց էջ 278. 'ի բառն Օհնան։

* Վասն զի գրեց ըստ խնդրոյ և 'ի կենդանութեան Սահակայ Ասպետի Բագրատունւոյ, որ նահատակուեցաւ Վահանեանց պատերազմումը յամին 482։ (Տես 'ի Զ. պատմ. Հայ. հատ. Բ. էջ 178)։

[6] ,,Ցորժամ սերտեալ Հիմնեցան հաւատոյ կողմանցս այսոցիկ, զկնի յետ բազում ժամանակաց յայտնեցաւ Ճգնաւորի ումեմն Գառնիկ կոչեցեալ, և լերեալ եդաւ 'ի գեղն Թորդան նշխարք սրբոյն Գրիգորի,, ('ի պատմ. դիրք Բ. գլ. ղե)։

ծին Գրիգորի (կայ) 'ի Գաբանաղեաց գաւառի, 'ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Յորդան[7]»:

Գիտել արժան է և զայս, որ ամենևրանեան սուրբ Հայրապետիս մալմինն երկար ժամանակ չմնաց Յորդանումը. այլ (ինչպէս հաւաստում են վաւերական գրուածք) յերկուս նուագս, այսինքն՝ երկու անգամում, յայն տեղէն ևս մանն մանն փոխադրուեցաւ 'ի Կաթուղիկէն Վաղարշապատու, այսինքն՝ Հոգմիածին: Գլխաւոր մասունքն (գլուխն, բազուկն, ևն) Թուի թէ՝ ոչ միայն յառաջ քան զՕձնոնի Թագաւորելն, այլ և յառաջ քան զՎարդանանց պատերազմը փոխադրուած էին Հոգմիածին, և ապա անտի ևս 'ի Գուին՝ երբ որ անդ փոխուեցաւ Կաթողիկոսական Ընթոռն յամին 452:

Այս ասածիս անժխտելի ապացոյցք են այն երկու դէպքն՝ զորս պատմում է Ղազար Փարպեցին: Պատմում է նա, նախ՝ թէ երբ որ Հայոց նախարարքն հանդերձ Վարդանաւ յամի Տեառն 450, յետ առ երեսս և եթ արեգակնապաշտ ձևանալոյ առաջի Յազկերտի, վերադարձան յաշխարհին Պարսից 'ի Հայաստան, եկեղեցւոյ պաշտօնեայքն՝ որովհետև կարծում էին թէ նոքա իսկապէս հաւատուլոց են եղած, չէլան ընդ առաջ նոցա, ինչպէս սովորութիւն էր, 'ի Վաղարշապատ քաղաքէն խաչիւ և նշխարօք սրբոյն Գրիգորի[8]: Պատմում է երկրորդ՝ թէ յամի Տեառն 480, երբ որ Վահան Մամիկոնեանն՝ Հայոց սպարապետ կարգըւեցաւ 'ի Վաղարշ Թագաւորէն Պարսից՝ դարձաւ եկաւ յաշխարհն Հայոց հանդերձ ուխտապահ նախա-

[7] Ի պատմ. դպր. Գ. գլ. ի:

[8] «Արդ՝ եկեալ հասանէին առնուտեարքն Հայոց հանդերձ սեպհօքն որ ընդ ինքեանս՝ յաշխարհս Հայոց, ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռք, որք ոչն տեսանէին լոյս՝ յառաջ լուսաւոր եկեցն ողջմբ յայնպիսի հեռաւոր ճանապարհէ, ելեալ ընդ առաջ նոցա դաք պաշտօնէիցն Քրիստոսի՝ բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին, և զնըշխարս Առաքելոյնն նահատակին սրբոյն Գրիգորի, նուագելով զձայն սաղմոսաց.... այլ անդ էր լսել զձայն լալոյ և ողբոյնս դառնի», ևն (Ի պատմ. էջ 94):

բարօք, Կաթողիկոսն Յովհան Մանդակունի՝ որ նստում էր Դուին քաղաքումը, ընդ առաջ ելաւ նմա նշանաւ սրբոյ խաչին և նշխարօք Գրիգորի Լուսաւորչի, որով ուղարկած էր զնոսա ՚ի Դուռն Պարսից [9]*:

Ընդ՝ երթէ Վարդանանց ժամանակումը Այծմիածին, և յետ այնորիկ Յովհաննու Մանդակունւոյ ժամանակումը ՚ի Դուին գտանում էին Լուսաւորչի նշխարքն, ուրեմն առանց երկբայութեան հաւաստի է՝ թէ յառաջ ևս ժամանակաւ հանուած բերուած էին այնոքիկ ՚ի Թորդան գիւղէն, և պահպանւում էին կէս մի ՚ի Վաղարշապատ, և կէս մի ՚ի Դուին. յորոց և մի մասն՝ ձեռամբ Մաթէի երիցու՝ աշակերտին Յովհաննու Մանդակունւոյ՝ տարուած էր Աղուանից աշխարհն ՚ի գիւղն Դարահոճ ընդ նշխարաց հինչ Հռիփսիմեանց [10]: Պատմեմք այժմ՝ յետ այնորիկ պատահած անցքերը:

Օ՜ենոն կայսեր Յունաց, Խաբդէն Կաթողիկոսի օրերում՝ որ յաջորդեց Մանդակունւոյն, յանկանալով (յայտ է թէ՝ ոչ առանց խորհրդատուր և օգտաւէտ նպատակի) ունենալ յիւր մայրաքաղաքումը զմի Լուսաւորչի նշխարքը, առաջնորդութեամբ Պերճենտիանոս զօրավարի՝ որ նստում էր ՚ի Միջա-

---

[9] ,,Եւ եկեալ զօրավարն Հայոց տէրն Մամիկոնէից Վահան յաշխարհս Հայոց՝ ամենայն ուխտապահ նախարարօքն Հայոց. որում ընդ առաջ ելանէր սուրբ այրն Աստուծոյ Կաթուղիկոսն Յովհան՝ պատուական նշանաւ խաչին, և սուրբ նշխարօք Ճգնազգեաց Նահատակին Գրիգորի, որով յուղարկեաց իսկ ՚ի Դուռն զամենեսին (Փարպ. ՚ի պատմ. էջ 307):

* Յայս դէպքերիցս հաստատապէս կարելի է գուշակել, թէ սովորութիւն ունէին մեր Հայրապետքն և եկեղեցականքն՝ զԼուսաւորչի նշխարքը ս. խաչի հետ ՚ի միասին ՚ի հանդէս հանել՝ երբ որ Հայոց զօրքն ՚ի պատերազմ երթային, կամ երբ որ ՚ի պատերազմէ ողջամբ վերադառնային:

[10] ,,Գնացեր (Վաչագան արքայ Աղուանից) և զամենասուրբ նշխարս Գրիգորի (Լուսաւորչի) և զյայժ հռչակելոցն Հռիփսիմեայ և Գայիանեայ ՚ի Դարահոջ գիւղն, որ է ՚ի նահանգին Արցախու. զոր էր բերեալ երիցուն Մաթէ անուն կոչեցեալ՝ ՚ի Յովհաննէ Հայոց Կաթուղիկոսէն, զոր ունէր նորին մատանեաւն կնքեալ,, (Մովս. Կաղանկատ. ՚ի պատմ. Աղուան. գիրք Ա. գլ. իե)։ Տե՛ս և ՚ի Զ. պատմ. Հայ. հատ. Բ. էջ 220:

գետս՝ խումբ մի զօրք ուղարկեց ՚ի Հայաստան հանդերձ քանի մի իշխանօք, որ առնուն տանին զայնս ՚ի Կոստանդնուպօլիս։ Ընդօրինակ բռնադատութիւնն կայսերն՝ ծանր թուեցաւ մեր ազգայնոց, և այնչափ ծանր, մինչ զի ընդհանուր ամբոխմունք և վրդովութիւնք ծագեցան։ Յունաց զօրավարն և իշխանքն կամենային զկայսերն հրամանը կատարել. իսկ մերայինքն յանձնառու չէին լինում յիւրեանց հայրենի և սրբազան ժառանգութենէն զրկուելու [11]։ Ահ ինչ վախճան ունեցաւ այս անցքս՝ պժուարին է ձիշդ հանդամանօք ցուցանել։ Ի՛ր մատենագիրքն խօսում են այս անցքիս վերայ՝ հայերով առատապէս, այն ժամանակներում տարածուած համբաւոց. բայց համբաւքն էս այլ և այլք էին։ Ոմանք ասում էին՝ թէ Յոյնք զԼուսաւորչի ամբողջ մարմինը՝ ՚ի Խոսրովեանց կուսանաց քանի մի մասանց հետ՝ առին տարան ՚ի Կոստանդնուպօլիս՝ թողլով ՚այոց միայն զԸնջը և զայլ ինչ մասունս [12]։ Ոմանք էս ասում էին՝ թէ ՚այք, փոխանակ Լուսաւորչի նշխարաց՝ տուին

---

[11] ,, Եհաս բանն (այսինքն՝ լուր թէ զմարմինն Լուսաւորչի թաղեալ է Գառնիկ ՚ի Թորդան) յականջս Դուռն Կայսերական կայանին Զհնունի։ Ապա բորբոքեալ սիրով և մեծաւ յուսով Զհնուն կայսրն Հռովմայեցւոց (Հոռոմոց), զօր բազում առաքէր փութանակի՝ մեծաւ պատուասիրութեամբ առ ինքն հասուցանել (զնշխարսն)։ Որք եկեալ մեծաւ հոգւարարձութեամբ ըստ հրամանի Կայսեր վերան կատարել. և յոչ տալ թոյլ բնակչաց գաւառին և ազգին Հայոց, զմերային բարիս ասելով ոչ ներելոյ այլոց լինել ձեռնհասութիւն, ամբոխք և խռովութիւնք յուզէին (՚ի ճառընտիրս. և ՚ի Ցայսմ. Նոյեմբ. 18)։

[12] ,, Ցայնմ՝ ժամանակի թագաւորն Յունաց առաքէ զօրավար ՚ի Միջագետս զպերևնտխանոս։ Եւ յաւուրսն յայնոսիկ յայտնեցան նշխարք սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի. և ազգ եղև կայսերն Յունաց Զհնունայ. և Նա առաքէ բազում լեգէոն զօրս ՚ի ձեռն զօրավարին Միջագետաց. որ եկեալ լուռութեամբ յափշտակեաց զնշխարս սրբոյն Գրիգորի. և ետ զալ ձեռնն Հայոց վանն լուսաւորելոյն զնոսա, և այլ ինչ ևս մասն. և տարաւ զնա բովանդակ. և այլ մասն ինչ ՚ի սրբոց Հռիփսիմեանց ՚ի Կոստանդնուպօլիս. (՚ի պատմ. մեծին Ներսիսի։ Գիտ. ՚ի Սիմէոնէ Հայկ. Հատ. Ը էջ 9. 10)։

— ,, Լուեալ կայսրն Զհնուն, և յղեալ տարաւ զբոլոր մարմին Լուսաւորչին ՚ի Կոստանդնուպօլիս, թողեալ Հայոց զձեռն ՚ի պարծանս մեր,, (՚ի Ցայսմաս. Սեպ. 30)։

նոցա զԳրիգորիսի Աղուանից Կաթողիկոսի նշխարքը։ Գտանուեցան և ասօղք՝ թէ զԳրիգորիսի Ընշարաւնեաց եպիսկոպոսի նշխարքը տուաճ են [13]։

Յայս ամացուածնեբիցս՝ առաջինն չէ ճշմարիտ, ըստ որում (ինչպէս պիտի երևի՝ի հետագայ տեղեկութեանց) Լուսաւորչի նշխարաց մեծ մասն մնաց Ասպատանումը։ Իսկ վերջինն անհիմն է ըստ ամենայնի. վասն զի Ընշարաւնեաց եպիսկոպոսն, եթէ իմացուի նա՝ որ զեկեղեցական պաշտամանց ընթերցուածքը մեկնեց, ծաղկեալ էր յեօթներորդ դարու վերջէրումը, Կամսարական Վահան Պատրկի օրերում՝ շատ ատրիներով յետոյ քան զՕվնան, և վախճանուեցաւ ուեթներորդ դարու սկզբումը յ713 Թուականի փրկչին [14]։ Իսկ զերկրորդ ասացուածքն՝ հաւանականապաը կարելի է ընդունել, որովհետև յայանի է յայլոց պատմութենանց, որ Գրիգորիսի Աղուանից Կաթողիկոսի նշխարաց դիւան ևս նոյն իսկ ժամանակներում եղած էր. այսինքն՝ յաւուրս Օվնանի Պայաձ և Աջազանայ արքային Աղուանից յամի Տեառն 489 [15]։

Օ՛իարդ և իցէ, յայս անցքերի հանդամանքներից երևում է, որ Հայք ստուած են յայնժամ՝ մասն ինչ՝ի նշխարաց Գրիգորիսի Աղուանից Կաթողիկոսի՝ որ Լուսաւորչի Թոռն էր, և մասն ինչ՝ի նշխարաց Հռիփսիմեանց կուսանաց. և Յոյնք ընդունած են զայնս իբրև իսկական նշխարք Գրիգորի Լուսաւորչի. և դուցէ զայս կամենում է Վարդան Պատմիչն հասկացընել այս խօսքերովս։ ,, Եւ յանուն նորա (իմն՝ Լու-

[13] ,, Ցոմանց այսպէս ասի, թէ զԱղուանից կաթուղիկոսին Գրիգորիսի Թոռն զնըշխարս. այլք թէ զԳրիգորիոսի Ընշարաւնեաց եպիսկոպոսի. և այլք թէ զմերոյն Լուսաւորչի (՛ի ճառընտիրս։ Տես և՛ի Վարս սրբոց. Հատ. Գ. էջ 359։ Եւ՛ի Ջ. Պատմ. Հայ Հատ. Ա. էջ 653)։

— ,, Խոռէն Կայաձին, ասեն, զՆշխարաւնեաց եպիսկոպոսն, Գրիգորէս անուն . . . . Ալլև նա այր առաքինի էր և յոյժ բարի,, (Վարդան՛ի Պատմ. էջ 51)։

[14] Տես՛ի Ջ. Պատմ. Հայ. Հատ. Բ. էջ 373. 562։

[15] Անդ. էջ 219—222։

սաւորչի) մեծարեցաւ ուր և գտանի ման ինչ [16]։ Եւ եթէ համարիմք մեք, որպէս համարում են այլք, թէ այդ յիշատակեալ Սրբոց նշխարաց հետ՝ ման մի ևս շատ կամ սակաւ ի Լուսաւորչի նշխարացն տարուեցաւ յայնժամ ի Կոստանդնուպօլիս [17], այնու ամենայնիւ՝ դարձեալ պիտոյ է հաստատութեամբ ընդունել՝ թէ նորա նշխարաց մեծ ման[ն] մնացած էր Հայաստանումը [18]։ Այս բանիս կրկին ապացոյց ունիմք անժխտելի։

Ա՛ռաջին ապացոյց այն է, որ Ներսէս Գ. Կաթողիկոսն մեր՝ Շինող կոչեցեալ, որ նստաւ յաթոռ Հայրապետութեան ի 640 թուին Քրիստոսի, և վախճան ուեցաւ ի 660, երբ որ հիմնարկում էր զայն հոյակապ մեծ եկեղեցին՝ զոր շինեց յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ Էջմիածնի արևելեան կողմումը՝ կէս ժամու ճանապարհաւ հեռի, զնորա նշխարաց կէսը (այսինքն՝ այն նշխարաց՝ որք ի վաղուց բերուած էին ի Թորդանէ ի Վաղարշապատ, և ապա անտի ի Դուին) չորս բաժին առնելով՝ դրաւ չորս մեծամեծ և հաստակառոյց սիւներուն տակը՝ վասն անկորուստ պահպանութեան. իսկ զգլուխը առանձին գգրոցի (տապանակի) մէջ զետեղելով՝ բազմեցոյց նոյնը սեղանոյն վերայ ի համբոյր և ի տես փափագողաց և ուխտաւորաց [19]։

---

[16] Ի պատմ. էջ 51։

[17] ,,Թէ յոլով և լեզ սակաւ ինչ ի նշխարաց սրբոյ Լուսաւորչին մերոյ տարեալ եղև առ կայսրն Զենոն ի Բիւզանդիա (ի Ցայտ. Նշխմ. 18. ըստ Ճառընտրաց)։ ցեա և ի պատմագիրս Կիրակոսի էջ 8. 9։

[18] Ի Վարս սրբոց. հատ. Գ. էջ 359։

[19] ,,Դնէ ապա հինն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ ըստ անուանակրութեան սրբոյն Գրիգորի՝ յանձն առնելով գկատարումն խմաստութեան շինողին քրիստոսի։ Իսկ ի հիմնարկել զԱստուածակերտ փարախն բանաւոր հօտին քրիստոսի՝ ի ներքոյ լերից սեանցն հաստահեղուսից բաժանեալ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահիլ գանձուն երկնաւորի ի գերեզաց ապականչաց, և ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց։ Իսկ զքրիստոսադրօշմ և զպատուական գլուխն ոչ ի խորոչ, այլ արտաքոյ ի գգրոցի եդեալ դնէ ի գան-

Երկրորդ ապացոյց այն է, որ յեօթներորդ դարուամբ, յաւուրս Կաթողիկոսութեան Սահակայ Գ. Զօրափորեցւոյ (այսինքն՝ ի միջոցի ամացն 677—683) մեծ իշխանն և զօրավարն Հայոց Գրիգոր Մամիկոնեան պատրիկ, զոյն ամենայն նշխարքը Ս. Լուսաւորչին՝ որք մնացած էին Թորդանուամբ, բերաւ ի Վաղարշապատ և հանգոյց նախայիշատակեալ նոր սրբոյն եկեղեցւոյն մէջ՝ յատաջուց բերուած նշխարաց մնացորդների հետ [20]: Բայց յայտնի է, ասուում է ևս՝ թէ նաև այն մասունքն՝ որ Զենոնի հրամանաւ տարուած էին ի Կոստանդնուպօլիս, զոյն Գրիգոր պատրիկի ձեռամբ վերստին բերուեցան ի Վաղարշապատ [21]:

Հայս նշխարաց միջէն քանի մի մասունք սփռուելոյն հետ գտեալ յայլևայլ տեղիս Հայաստանի զանազան պատճառօք կամ դիպուածովք [22]: Գլուխն տարուեցաւ յօտար երկիր. իսկ

Ձարանս Աստուածուհեանն ի յոյս բարեաց փափագողաց նմա և ի բժշկութիւն ախտակրելոց (Ցովհ. Կաթող. ի պատմ. էջ 48):

— ,, Արկանէ (Հայրապետն Ներսէս) հինն տաճարի մեծի յանուն սուրբ Գրիգորի յառապարի. և դնէ ի ներքոյ սեանցն յորից գտաւարակ նշխարս սրբոյն Գրիգորի. և գլուխըն ի գլոցի եդեալ՝ պահէ ի պետս բժշկութեան ախտաժետաց ,, (Վարդան ի պատմ. էջ 79):

[20] ,, Ի ժամանակն յայնոսիկ բերեալ էր իշխանն մեծ զօրավարն Հայոց (Գրիգոր Մամիկոնեան) ի Թորդանայ ի Դարանաղեաց գաւառէն գնշխարս սրբոյն Գրիգորի (մնացեալս անդէն) բոլորովին ամենայն ոսկերաւքն հանդերձ յաշխարհս Հայոց յԱյրարատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաք. հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցւոյն՝ զոր մեծին Ներսիսի (իմն՝ Ներսիսի Գ) շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի ,, (Մովսէս Կաղանկատ. ի պատմ. Աղուան. գիրք Բ. գլ. լԸ):

[21] Զսրբոյն Գրիգորի զնշխարսն ասեն բերեալ ի Հայս Գրիգոր Մամիկոնոյ, ի գնալ նորա դեսպան ի Կոստանդնուպօլիս՝ տուեալ կին ումն յաւագաց, որ ունէր առ իւր. և նորա գաղտ հանեալ ի ծով, և անցեալ գայ բերէ անգիտութիւն քաղաքին զգանձն անանց մեծութեան (Վարդան ի պատմ. էջ 79):

[22] ,, Եպիսկ (զմարմին Լուսաւորչին) ձգնաւորն սուրբ Գառնիկ, և տարաւ ի Թորդան. և անտի տարաւ Զենոն կայսր ի Կոստանդնուպօլիս, և յետոյ բերաւ շնորհօքն Քրիստոսի ի Հայս ի ձեռն Գրիգորի Պատրկի. որոյ կէսն եդաւ ի ներքոյ յորից սեանցն սուրբ

Ընչն յետ շատ անգամ տեղափոխ լինելոյ՝ դարձեալ բերուեցաւ յԱլիաճին: Ի վերայ այսոցիկ որիշ որիշ խոսել հարկաւոր եմք համարում:

ՄՍԵՐ ՄՍԵՐԵԱՆՑ:

(Շարունակելոցի)

ՎՕՏԻԻԼ ԻՒ KAPTIIIЬI [1]

(Գ-ոյե Պարտ Լ'Ամբանօպէերին):

Վ՚օտևիլն հղկերգական շարադրուԹիան մի առանձին մասն է: Սորա սկիզբն վերաբերում տալն և հինգերորդ դարուն: Ի մահուտ շնող Օլիվիե Բասլլէն (Olivier Basselin [2]) **1450** *Թուականին շարադրեց Ծաղրական [3] երգեր, որոնք անուանվեցան վօտևիլ* (vau-de-vire): *Յամանակով այս բառի բառադնուԹիւնը մոռացվեցաւ և վօտևիլից տուրս եկաւ վօտևիլն* (vaudeville), *որն որ մինչև յայժմ. այս Ծաղրական երգերն շարադրվումէին մարդոյ անցքերի վերայ: Բայց վօտևիլն*

Դրիգորի Առաջարին. և այլն յեկեղեցիս և 'ի բազում տեղիս գանձեցաւ։ ('ի ճառ գովեստ. Լուսաւորչ: Գիտ 'ի 2. պատ. հատ. Ա. էջ 655):

— * Ցայս սփռուած նշխարաց կարգումն կարելի է դասել և զայն նշխարքն՝ որք գտանումէ էին երբեմն Խոր Վիրապն մենաստանումն՝ ըստ վկայութեան Տփխիսեցի Դաւիթ վարդապետին, որ նոյն մենաստանի Առաջնորդ էր՝ ճակոբ Դ. եղիազար, և նահապետ կաթողիկոսաց ժամանակներում, և անդ էս վախճանուած և թաղուած է յամի ցեռաձն 1695: Թէպէտ և 'ի ՏԷր հանգուցեալ ընորհազդեաց Հայրն մեր՝ Յովհաննէս եպիսկոպոսն Շահխաթունեանց ('ի Սուրագր. Արբատ. հատ. Ր. էջ 281) երկբայական է համարում դիւրատակեալ Դաւիթ Առաջնորդի վկայութիւնը՝ ասելով թէ ,, Հակառակի (այն) ընդհանուր պարզ խնացութեան գրուածոց պատմութեանց ազդիս ,, . Բայց որովհետև նոյն իսկ գրուածքն կամ պատմութիւնքն ազգիս (ինչպէս տեսանուեցաւ 'ի վերոյհիշ. 21 Յանուար.) յայտնապէս Յանուցանում են՝ Թէ ,, և այլն (այսինքն՝ այլ մասունքըն նշխարաց կամ ոսկերաց Լուսաւորչի) յեկեղեցիս և 'ի բազում տեղիս գանձեցաւ ,, , չհամարձակիմք մեք առանց զօրեղագոյն պատճառի անհնարաւոր համարել զգտանելիքը նշխարաց ինչ Լուսաւորչի Խոր Վիրապի մենաստանումը գոնէ առ ժամանակ մի:

[1] Նկարագիրը: [2] Սա բնակվուձեր Նորմանդիայումը Վիր (Vire) գիւղի մէջ:
[3] Сатирическій.

երկար ժամանակ չ'ունէր այս նշանակութիւնը. սորա այժմեան առոյգ նշանակութիւնն դուրս է գալի կատակերգութենից [4]; Վ֊օտևիլի պարունակութիւնը և նպատակը ցոյց տալու համար հարկաւոր է ասել մի քանի խօսք կատակերգութեան վերայ:

Կատակերգութիւնն առաջաւ իւր սկիզբն Էպիռաճոնէնից, որը Յունաստանի շինականներն երգումէին խաղող քաղելու ժամանակ՝ ի պատիւ Վակխոսի [5]: Կատակերգութիւնն ներկայացնումէ մարդուն այնպէս, ինչպէս որ նա երևումէ սովորական և հանապազօրեայ կեանքի մէջ՝ իւր փոքր կիրքերով և թուլութիւններով, և ցոյց է տալիս, թէ ինչպէս գերի է միշտ պատուասիրութեան, արծաթասիրութեան ու ուրիշ թուլութիւնների, և թէ ինչպէս ենթարկուած է ունայն աշխարհի խաղալիքներին: Այսպէս կատակերգութիւն ներկայացնելով մարդուն իրրև թոյլ էակ ու դիպուածների յաւիտենական սորուկ, հրատարակումէ [6] նորա դատարկութիւնը և պակասութիւնները, բայց բարի դիտաւորութեամբ,—որ նորան ուղղէ: Կատակերգութիւնն բոլորովին ընդհակառակ է եղերերգութեան, ուր մարդն երևումէ ամենազօր և ամենահանճարեղ էակ, որով զարթեցնումէ առ ինքն հայեցողների համակրութիւնը [7]: Կատակերգութիւնն առաւել հանդիսաւոր է լինում այն ժամանակ, երբ ներկայացնումէ հայեցողներին ժամանակակից հանգամանքները և դիպուածքները: Կատակերգութիւնն ըստ բովանդակութեան կարելի է բաժանել. Ծաղրական [8] և ղա֊ռ֊ծալէ [9]: Առաջինի մէջ նկատուումէ այնպիսի բնութիւններ, որոնք ներկայացնում են ժամանակակից հասարակութեան թուլութիւնները և պակասութիւնները: (Ասայց այնպիսի պակասութիւններն և յանցանքներն՝ որոնք կարեն տրտունջ և վարկաբեկանք պատճառել, տեղի չ'ունին): Ուրիշն կատակերգու-

---

4. Комедія. 5 Հատուած գիտեայ: 6 Обличаетъ. 7 Сочувствіе. 8 Сатирическій. 9 Шутливый.

թիւնն՝ մեր աչքի առաջ բերելով մարդոյ անվայելուչ բարոյականութիւնը զուարճալի ձանձրարհով, ուսուցանումէ և զգօնացնումէ մեզ։ Իսկ՝ երկրորդ տեսակն, այսինքն՝ զուարճալի կատակերգութիւնն երբէք չէ պարունակում իւր մէջ մի խորին ծանրակշիռ գաղափար կամ վարագուրած բարոյական խրատ։ Նորա միակ նպատակը և նշանակութիւնն այն է, որ բերկրեցնէ հայեցողներին ծիծաղելի դրութիւններով և տեսիլներով։ Աղբական կատակերգութիւնն սովորաբար ունի արարողութիւններ՝ ոչ հնգից աւելի, և ոչ երեքից պակաս. ընդհակառակն ծիծաղելի կատակերգութիւնն սակաւ է պատահում՝ որ երեք արարողութիւնից աւելի լինի։ Ահա այս բաժանման մէջն է պարունակվում վօտևիլի գաղանիքը։ Վօտեւիլն եթէ մեր առնենք այն մտքով՝ ինչպէս մենք այժմ հասկանումենք՝ ըստ պարունակութեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ փոքր կատակերգութիւն երկրորդ կարգի։ Բուռաքին ձևով կատակերգութիւնն զանազանվումէ վօտևիլից այն բանով ևս՝ որ սորա մէջ երգվումէ կարճառօտ տուներ [10], որոնցով ներգործող անձինք բացայայտումեն իւրեանց խաղարկութեանց յարմար ընդհանուր ճշմարտութիւնները, կամ զանազան ծանօթութիւնները՝ վերաբերեալ իւրեանց փոխադարձ դրութեան, և որոնք երգվումեն երաժշտութեան հետ միասին։ Այս ամէն երեք տեսակ շարադրութեան մէջ պետք է լինի վայելուչ կապ [11] և վախճանական կէտ [12]։ Աղբական կատակերգութեան մէջ, կապն կարող է լինել բաւական խառն և ընդարձակ. իսկ զուարճալի կատակերգութեան մէջ նա լինումէ աւելի հասարակ՝ բայց վօտևիլի կապն և վախճանական կէտն պետք է լինին ամենահասարակ և ոչ խառնիխուռն։ Ահա ինչ բան է վօտևիլն, ինչ է նորա արտաքին ձևը և ներքին նշանակութիւնը։

---

10 Куплеты. 11 Завязка. 12 Развязка.

Ահա յօդուածն յառաջացաւ այն անյայտ մարդոյ նամակից, որն որ ուղարկել է պայծառատիպալ կոմս Նմմանուէլի մօտ, և որը որ նա հրատարակել է իւր օրագրական թերթերի հետ Հիւսիսափայլ ամսագրումը [13]: Ըլն անյայտ անձն՝ խօսելով իւր նամակի մէջ Թատրոնի վերայ, որը խաղացին 27 ին յունվարի Մոսկովու համալսարանի հայ ուսանողներն, նմանապէս ասում թէ,, առաւել յարմար կը լինէր, որ Պ. Ալադաթեանցի ,, Ա՛յ իմ կորած յիսուն ոսկիս ‘‘ վերնագրով վօտեւիլն անուանել էին картины (նկարագիրք) քան թէ Վ՛օտեւիլ,, Ինչու՞ համար: Ես բոլորովին չեմ հասկանում: Անյայտ անձն ասում է. թէ վօտեւիլն մեզ նը կարծ ու նպատակ և ուղիղ վերջապրական կէտ: Ըր գիտեմ ինչ է պարոնի համար նպատակ և ինչ է վերջադրական կէտ: . . . . . .

. . . . . .

Ես էլ ներկայ էի գանվում այն Թատրոն խաղալու ժամանակ, և չը նայելով որ նստած էի յետին կարգումը՝ լաւ հասկացայ նպատակն, և շատ լաւ էլ նկատեցի ինչպէս կապը՝ նմանապէս և վախճանական կէտը: Ես մի մեծ բան չէր նպատակի կամ վախճանական կէտի նկատելը. խօսքերս ապացուցանելու համար ես ստիպուած եմ պատմել վօտեւիլի պարունակութիւնը, որ այս է:

Վ՛օտեւիլի գլխաւոր անձն [14], կարապետ անունով, քաոսատան և հինգ տարեկան մարդ, կարդալով մի ժամանակ Պ՛արամանեան գրքումը, թէ մի Գարդանքեշան տղայ ունէր մի աներևութացնող դդակ, և անուամբ ինչ որ ուզուամբ, որովհետև ծանկած ժամանակ՝ նորան ոչ ոք չէր կարողանում տեսնել: Սա էլ ուզեց վայելել մի այսպիսի դդակ, թէ իւր ջահիլ կնոջ սէրը և հաւատարմութիւնը փորձելու և թէ ուրիշ

---

[13] Տես Հիւսիսափայլ օրագիր տետրակ ը 1859 ամի: [14] Героій.

ձեռնարկութիւնների համար. էհ, ինչու համար կուզէ լինի, մեղ ինչ փոյթ: Կարապետն մտածելով դգակի վերայ՝ տաքացած մանէ գալիս սենեակումը. այս ժամանակ ներս է մտնում մի սնապարծ և շիկար (chicard) երիտասարդ Պետերբուրգից նոր եկած: Նիկոլայի Միխայլովիչն (այս էր սորա անունը) լսելով՝ որ Կարապետն խօսումէր Գարդանքեշանի վերայ՝ ցանկանում իմանալ բանի զօրութիւնը: Կարապետն յայտնում նորան բոլորը՝ և ասում թէ ինքն էլ ցանկանում ձարել մի այնպիսի դգակ: Սա խոստանում թէ կարող է ձարել այն դգակը և բաւական կարճ ժամանակի մէջ. այսպէս խոստացած գնում դուրս, քիչ ժամանակից յետոյ Կարապետն էլ գնում իւր խանութ: Ընդ միջոցումը Ն. Միխայլովիչն գալիս է Աալօմէյի [15] մօտ. յայտնում նորան իւր դիտաւորութիւնը. ասում թէ նորա մարդն ցանկանում ձարել մի անեւևութացընող դգակ, որ փորձի թէ արդեօք կինն սիրո՞ւմ նորան, թէ ոչ. և թէ այս գդակն նա ինքն պէտք է ձարի Կարապետի համար: Ընդ ասելիս հանում գրպանից մի առանձին տեսակ գդակ և ցոյց է տալիս նորան ,,այս գդակն ոչնչ զօրութիւն չ'ունի, ասում նա, բայց ես ցանկանումեմ նորան խաբել'' և խնդրում է որ նա օգնական լինի. այսինքն՝ թէ երբ նա ծածկէ այն գդակը, Աալօմէյն այնպէս ձևանայ իբր թէ նա չէ տեսնում կարապետին: Աալօմէյն շուտով համաձայնվում, որովհետև նորա համար էր պատրաստվում այս թալիսմանը, ու տալիս Ն. Միխայլովիչին խօսք, որ անպատճառ կատարելու է նորա խնդիրքը: Ն. Միխայլովիչն գնում, և փոքր ժամանակից յետոյ գալիս է Կարապետի մօտ, և հետը բերում մի դերվիշ, որն որ տալիս է Կարապետին նորա ցանկացած դգակը, և սովրեցնում երկու խօսք. որոց մինն պէտք է ասի այն ժամանակ՝

---

[15] Կարապետի կինն:

երբ կը ծածկէ, և միւսն երբ վեր առնէ զգեստը: Կարապետն տալիս է նորան իւր խոստացած չիսուն ոսկին, և դերվիշը Ն. Մխայլովիչի հետ գնումեն դուրս:

Ահա վօտևիլլի կապն՝ այժմ վնտռենք վախճանական կէտը: Կարապետն չգիտէ՝ թէ ինչ անէ ուրախութենից, չը գիտէ՝ թէ ինչպես փորձէ գդակի զօրութիւնը: Վերջապէս կանչումէ Սալօմէն և ասումէ, որ նա վայելուչ թէյի պատրաստութիւն տեսնէ, որովհետև Ն. Մխայլովիչն նոցա հետ հիւր է գալու: Սոքա գնումեն դուրս: Առան պատրաստումէ սեղանը, ներս է բերում ինքնաեռը լէն, լէն: Փոքր ժամանակից յետ մտնումեն Կարապետն և Սալօմէն. գալիս է և Ն. Մխայլովիչն և նստումէ Սալօմէի կողքին: Կարապետն իսկոյն ծածկումէ գդակը՝ ասելով դերվիշի սովորական խօսքերը, և նստումէ հիւրի և կնոջ մէջ տեղը: Ներանք ձևանումեն իբրև թէ չեն տեսնում նորան. Ն. Մխայլովիչն սկսումէ վատաբանել Կարապետին, ընդհակառակն կինն պահպանումէ իւր մարդուն: Ընդպէս Կարապետն հաւատաց, որ նորան բոլորովին չեն տեսնում: Վերջապէս հիւրն գնումէ իւր տուն, իսկ Սալօմէն՝ ընթրիք պատրաստելու. բեմի վերայ մնումէ միայն Կարապետն: Ըստ ամենայնի բաւականացած այսպիսի դիւռտով, և առաջի փորձի յաջողութեամբ սկսումէ ինքն իւրեան խօսել. ,,Էգուց ինչեր կօնեմ, կու ծածկիմ էս գդակը,,(գդակը գնումէ գլխին և ասումէ հարկաւոր խօսքերը)'' կեհամ Խազազիանայ, Սիրաշխանայ, Զինապանխանայ. ուր ասես՝ կու մանգամ, ինչ որ թագուն բան կայ, ինգի տունեայ, կու իմանամ. իժում հանդարտ հանդարտ կուգամ տուն, կօսիմ.... բ.... [16]'' Այս ժամանակ Կարապետն ուզումէ ասել այն խօսքը, որն որ հարկաւոր է ասելու՝ գդակ վեր առնելու ժամանակ, բայց մո-

[16] Ներբ պատուելի հեղինակն, եթէ ես չը կարողացայ դնել այս տեղ իսկական Կարապետի խօսքերը, բայց միտն այս էր:

ուանում է: Սկսում ազաչել սուրբ Կարապետին և այլ սուրբերըուն, բայց՝ ի զուր.... Ըլն ժամանակ Սարգիսն [17] ներս է մտնում և սկսում նորա հետ խոսել. Կարապետն ասատիկ զարմանում, թե ինչպես է նորան տեսնում: Ըլժամ՝ միայն կըզձալի Կարապետն հասկանում որ խաբուել է: Նորա ծիծաղելի հառաչանքով և յուսահատութենով վերջանում վօտեւիլն: Ըլժամ ասացիք խնդրեմ՝ արդեօք կայ այս տեղ վախճանական կէտ, թէ ոչ: Կարծեմ որ կայ. Կարապետն ցանկանում ձարել աներեւութացնող գդակ, ձարեց. ահա կապն: Բայց գդակն էր շինովի [18]. ուրեմն նորան խաբեցին և՝ ի զուր տուեց յիսուն ոսկին. ահա այս էլ վախճանական կէտ: Զարմանալի է, որ այն պ. Նամակագրողն՝ լինելով թատրոնոմը, չը նկատեց այսպիսի պարզ վախճանական կէտը. երևի նա այն ժամանակ ննջումէր, կամ նորա միտքը զբաղուած էր աւելի իրան քմահաճ՝ և արժանաւոր միայն իւր բարձր աստիճանին՝ բաներով: (Ես կարծումեմ, որ կոմսի բարեկամն և այսպիսի խորամիտ նամակագրողն չի լինի մի հասարակ մարդ): Նա առաւել յարմար է համարում պ. Ըլադաթեանցի վօտեւիլն, картины (նկարագիրը) անուանել: Ես հաստատ գիտեմ, որ նա բոլորովին չէ հասկանում այս բառի նշանակութիւնը. եթէ հասկացել էր՝ չէր ասել: Ընդհակառակն հեղինակն կամեցել է մի խելօք ծանօթութիւն անել, և սրանից խելօք բան չէ գտել. գովելի է գոնէ բարի ցանկութիւնը: Նկարագիրն է գործողութեանց բաժանումն՝ կատակերգութեան կամ եղերերգութեան մէջ, որն որ ոչինչ չէ կարող ժողովրդին հասկացնել, որովհետև նկարագիրն ինքն ըստ ինքեան չէ կազմում մի ամբողջ բան: Ես մինչև այսօր ոչ տեսել և ոչ լսել եմ, որ թատրոնի բեմի վերայ խաղացած լինելին այդ վերնագրով մի բան, բայց՝ ի կենդանի

---

[17] Կարապետի ընկերն է: [18] фальшивый.

նկարագրիլ [19]: Ուրեմն Պ. Ալտաթեանցն չէ սխալվել որ առնուանել է զիւր աշխատութիւնը վօդևիլ և ոչ картины:

. . . . . .

Նիկ. Ցով. Պապոռնաբէք:

Ի 1859 ամի, ի 10ն Ապրիլի.
Մոսկուայ:

ԱՂԵՐՍ ԱՒ ԽԱՉԵՑԵԱԼՆ *

Ի քառանկիւն ի խաչին՝
Վտակդ հոսեալ անպղտոր,
Ծարաւելոց ջուր կենաց՝
Եւտուր մարդկան կամակոր:
Ամն ի փայտին ի տարած՝
Վիժեալ գքո սուրբ զարիւն,
Զկեղտ մեղաց իմ մաքրել՝
Համբեր հոգւով գերաբուն:
Ընդ արագ ի գնկլիս՝
Ի փրկութեան ի գործին,
Զամօթ մեղացս ի բառնալ՝
Բազուկդ եւտուր ի կպչին:
Համագոյից դու Հաստիչ՝
Ի բարձուանդակն ի դիտակ,
Զխաւիւ մեղացս ի յայրել,
Ցաւոց տարար անքանակ:
Ընկնեալանձ մոլեգին՝
Խուժան կրիցս գառնութեան,
Դու մատնեցեալ ինքնիշխան՝
Ի ձող բարձար փրկութեան:
Կամաւորիդ սուրբ գնման
Երկիրպագեմ հաւատով՝
Մեղայ գոչեալ արտասուօք՝
Սիրոյդ մնամ ջերմ յուսով:

Ընդ երեգական ընդ լուանի՝
Իմ նուաղեցաւ լոյս աչաց,
Զմերկ տեսիլդ ի խաչին
Մի՛ ականել սուրբ դիմաց:
Յանթառամդ ի ծաղիկ՝
Ցուսով դիմեալ աներկմիտ,
Հոտ անուշել աղերսեմ՝
Ապիրատիս խեղամիտ:
Պողղ և սարսափ գնս ունի՝
Երբ զվիշտ քո Տէր յիշեմ,
Կտիր անձն իմ չարաչար՝
Ցորժամ ի միտ գայն բերեմ:
Պանդխտութեան ես որդիս՝
Ցարտօսր ի ջերմ յորդահոս,
Քնար գայս նոր երգեցի՝
Գարման վշտաց իմ հոգւոյս:
Լոտինս գերկին լինձ ի յօգ՝
Մաղթեմ ձայնիւ հեզաբան,
Ի դժնդակն յաղեխից՝
Զիս գերծանել յանպայման:
Նշակիդ միշտ ընդ հօր՝
Սեղան խաչիդ յողջակէզ,
Զսիրտ իմ անձկոտ և գհոգի՝
Ընկալ սիրոյդ յասպարէզ:

---

[19] Живыя картины.

* Սկզբնատառք տանցն յօդեն զանուն հեղինակին, որ և տեղմանուն է պապովկանց:

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԿԱՆՑ

Մէկ տան մէջ կար մէկ մեծ կատու,
Խիստ կատաղած և ահարկու,
Որ խեղճ մկանց միշտ անդադար,
Տանջում էր նա խիստ չարաչար։

Նոքակից ով որ՝ գալիս էր դուրս,
Կատուին կըլներ քաղցրահամ որս,
Իսկ որ ծակի մէջը կմնար,
Սրաղցած ծարաւ կմեռուլանար։

Երբ մկները տեսան այս բան,
Ըսացին, այս չէ լաւ նշան,
Ըյս երկնառաք պատիժ մահու,
Փուչ կենդանին այս չար կատու։

Եկէք, եղբարք, խորհուրդ անենք,
Ըյս չար կատուից մենք ազատուենք,
Եւ թէ այսպէս անհոգ կենանք,
Պէտք է քաշենք սորա տանջանք։
Ժաւաքուեցան մկները մէկ տեղ,
Գտնեն իրանց ցաւերին դեղ։

Ըյն ինչ տրտում նստան շարքով,
Մէկը նրանցից ասաց ոճով,
Ո՞նչ էք ասում, ով բարեկամք,
Մինչ եթրե կատուն տայ մեզ տանջանք։

Մեթէ չկայ հնարք և ճար,
Ըյս երկնառաք պատժիս անտար,
Որով ընկերք մեր գետատար
Գտնեն իրանց հանգիստ դադար։

Յանկարծ խելքը ծեր ոմն մուկ,
Ըսաց, լսէք ով իմ ձագուկք,
Ըշխարհիս մէջ չկայ ինչ բան,
Որ չունենայ իրան դարման։

Գտէք, բերէք փոքրիկ զանգակ,
Եւ քիչ մի թել հաստ կամ բարակ,
Կապենք այն չար կատուի վզին,
Որ պրծընենք նորա ձեռքէն։

Այն ժամանակ անահ անվախ,
Կարենք գնալ մեր եղբարց թաղ,
Ասկ երբ լսենք ձայն ղանգակին,
Հ֊ուտով մտնենք մեր ծակ մթին։
Ժողովք մկանց այժ խնդացին,
Տեսէք, ասին, խելքը ծերին,
Ինքն ալևոր վարճահասակ,
Խօսքեր ունի սուր քան դանակ։
Ըպա՛, ասաւ, ընտրէք, եղբա՛րք,
Ո՛ւկ մի ճարպիկ բարձրահասակ,
Որ կարանայ այն ղանգակը,
Ընդկացնել կատուի վիզը։
Ժողովք մկանց այս որ լսեցին,
Ըմէնքը մէկ դեհ քաշուեցին,
Ո՛էկը ասեց, ես հիւանդ եմ.
Այուան, ափսոս, որ ճարպիկ չեմ.
Ըյլ մի ոմն, թէ ես ծեր եմ.
Այուան՝ թէ շատ որդւոց տէր եմ,
Պոչը կտրած մէկը էնղաց.
Ի՞նչ էք անում ճարը կտրած,
Ես այդ գործը յանձս կառնեմ,
Ե֊ յոյս ունիմ որ բաշարեմ։
Ասյց թող մէկը դայ ձեր մէջից,
Որ պինդ բռնի կատուի վզից,
Ըյն ղանգակը ես կկախեմ,
Լիրը այն կատուի հետ շընքից։
Ժողովք մկանց այժ խնդացին,
Վ֊աշ ասեցին, ողջ ծաւի տուին.
Ասկ երբ տեսան այն չար կատուն,
Փախան, մտան իրանց խոր բուն։
Ըյսպէս ժողովքները շատ կան աշխարհքում,
Որ շատ մեծամեծ խորհուրդ են անում,
Ասյց թէ կարող են՝ այն չեն իմանում,
Ըյլ մարդկերանց մէջ, կամ թէ փողոցում,
Ո՛ւճ մեծ են բրդում ու խիտ են փքում։
Երբ գայ ժամանակ գործքը վճարել,
Ասկոյն մկանց պէս ծակեր են ճարում։

Ալէ դու, ուշիմ մարդ, երբ մտնես ժողով,
Մի շուտ շտապիլ, այլ խօսիր մեղմով,
Տան անգամ չսիրէր ինչ խօսելու ես,
Լեռ ու չ մկանց պէս ծակ կպտրտես։

Երեմիա Խոհակնեանց Հին–Նոխիջեւանեցի։

ՉԻՆԱՑԻՈՑ ՏՕՆԵՐՆ

Չինացիք տարւոյ մէջ ունին վից երևելի տօնք, որք են.

ա. Նոր պարկէ, որ տօնւում է այնպէս, որպէս և այլ ամէն ազգաց մէջ. գնում են միմեանց շնորհաւորելու, ընծայ են տանում, և յամենայն գործոց ազատանալով՝ ուրախական հանդէսներ են կատարում։

բ. Տօն երկրագործաց, որոյ համար պատրաստում են մի մեծ կաւակերտ ցուլ, որ ձևացուցանում է զգարունը։ Այն օր թագաւորն ինքն մեծ հանդիսիւ՝ ի դաշտ ելանելով՝ իւր ձեռամբն զսակեայ արօրը ձգելով՝ հերկում է զերկիրը։

գ. Տօն ջերմապատհո–ընեան, որ երևելի է այնու, որ թագուհին մեծ հանդիսիւ այն օրը զոհ է մատուցանում՝ ի վերայ վառաւոր սեղանոյն, որ շինուած է՝ ի պատիւ հնարողի զկերպասը։

դ. Տօն նահո–, որ կարգուած է՝ ի յիշատակ մի բարի որդւոյ, որ՝ ըստ աւանդութեան՝ այնպէս սիրում էր զնւբ մայրը, որ յետ նորա մահուան գնալով նորա եռւէն՝ ի միւս աշխարհը՝ վերադարձուցած է զնա յայս աշխարհս։

ե. Տօն լ–անի, այսինքն գիշերոյ լոյսում՝ ըստ սնոտի կարծեաց Չինացւոց՝ լուսնի վերայ երևում է նապաստակ, և նա միայն կարող է տեսանել զայս հրաշքս, ով որ այն գիշեր ուտէ զլ–անոյ կաքիանդակը (лунный пирогъ), որ առանձին այսոր համար եփուած է։ Այս պատճառաւ լիք են լինում ամենայն փողոցքն ամբոխիւ մարդկան, որք զմիմեանս մեծարում են լուսնոյ կաքիանդակով։

Ը. Տօն լապտերաց (ֆէնէր), որ քան զամենայն տօնս շքեղն և փառաւորն է՝ ճրագաց բազմութեամբ, որ լուսաւորում են զիպողոյնները և զքաղաքի ամէն տները: Զինացւոց ամէն ազգն այս տօնիս օրումը կախում է իւր տան առաջև զանազան դոյնզդոյն լապտերներ, և լուսաւորում է՝ ըստ կարողութեան՝ զիւր տան բոլոր սենեակները կամ խցերը: Այս տօնս լինում է 'ի Յունուարեան առաջին լուսնոյ տարւոյն, և շարունակւում է հինգ օր:

Զ. Մ.

ՀԱՅԿԱԿԱՆԻՆ ՏԵՐԵԳԻՐ

ՄՈՍԿՈՒԱ

Գլխաւոր և իսկական նպատակն Անգղիոյ մէջ եղած ուսումնարանաց: — ճշմարտութիւն՝ որպէս հիմն բարոյական կրթութեան: — ճշմարտութեան անյաջող և խոտոր-նակ ընթացքը մեր ազգի մէջ՝ մեր օրերումս: — Հատուածք հանեալք 'ի Պ. Ֆ. Ա. Ասլանբեգի նկատողութենէն: — Նորատիպ գիրք: — Լուր վասն վերհափառ Կաթողիկոսի ուղևորութեան: — Նորին Վերհափառութեան՝ ընդ նմին և Մակար Արքեպիսկոպոսին և երից վարդապետաց՝ ներկայանալն Սուլթանին, և վարձառուին նոցա 'ի նմանէ մեծիմիթ շքանշանաւ: — Մասեաց Աղաւնւոյ 'ի Փարիզ տպագրութեան դադարումն:

Գլխաւոր և իսկական նպատակն տղայոց համար եղած ուսումն նարանաց Անգղիոյ մէջ այն է՝ որ պատրաստեն զմանուկը առ գործնական (практической) կեանս, առնել զնա գործնական մարդ: Իսկ վերին գիտութիւնքն՝ որպէս և զայն ամենայն՝ որ նորա վերին կեանց կոչմանը պիտի ծառայէ, մանուկն պիտի ստանայ ինքնին՝ իւր սեպհական ջրօրութեամբն: Գործնական մարդ լինել՝ գլխաւոր խնդիր է Անգղիոյ մէջ:

Իսկ բարոյական կրթութիւնն այն տեղ հիմնւում է 'ի վերայ ճշմարտութեան: Իւրաքանչիւր հայր ամենայն ջանիւք աշխատում է զարթուցանել իւր զաւակաց սրտի մէջ սէր առ ճշմարտութիւն, ճանաչելով զմեծ ներգործութիւնը, զոր ազդում է այն՝ որպէս 'ի վերայ մեր, այնպէս և 'ի վերայ մեր յարաբերութեանցն առ այլս: Մարդս սիրելով զճշմարտութիւնը՝ զօրանում է վասն իւր վերնագոյն կոչ-

ման, ըսանում է յաղթել վիւր տկարութիւնքը, ստանում է հաստատ ընաւորութիւն, և լինում է իսկապէս այր կատարեալ։ Ուր կայ ճշմարտութիւն, այն տեղ տեսանում ենք մեք հաւատարմութիւն առ մարդիկ, այն տեղ հաստատուն է մարդն, և ոչ ինչ դիպուած կարող չէ դրդուեցընել զնա կամ թուլացընել։

Ուրեմն որպիսի եղանակաւ զարթուցանում են Անգղիացիք ըզ սէրն առ ճշմարտութիւն։ Դժբաղդաբար՝ ճշմարտութիւնն չէ ամրացուցուած մեր բնութեան հիման վերայ. սուտն առաւել մօտ է մեզ, և ինչպէս այս այսպէս լինիր, երբ որ բնութեան մէջ ամենայն ինչ առաջնորդըւում է յանձնական կրից։ Ինչպէս ձեռք չգնեմք այն ճիւղին՝ որ կարող է զմեզ ազատել։ Այն ժամանակ միայն մեք կարող ենք ասել՝ թէ բարոյականութիւնն հասաւ կատարելութեան վերին աստիճանի, երբ որ ամենացած պատճառքն՝ որք ծառայում են անձնասիրութեան, հեռացուցուած և արհամարհըւած լինին։

Մանուկն ևս շատ անգամ դժուարանում է խօսել զճշմարիտը. նա ուրախանում է միշտ՝ երբ որ կարողանում է մի սուտ պատճառ գտանել՝ որով կարողանայ ծածկել զիւր յանցանքը. ի հարկէ՝ յայսպիսի ժամանակում ներգործում է նորա վերայ երկիւղն՝ տեսանել բարկացած զՀօր գեմքը, կամ թէ լսել ի նմանէ յանդիմանութիւն։ Անգղիոյ մէջ՝ իւրաքանչիւր հայր աշխատում է ամենայն զօրութեամբ ոչնչացուցանել զայս երկիւղը մանկան սրտումը փայփայանքով (ласкою), յորդորում է զնա ի խոստովանել, և այսու իսկ ստիպում է խօսել զճշմարիտը։ Թէ ինչպէս է ընթանում հայրն իւր որդւոյ հետ՝ կարող ենք տեսանել յայտնապէս հետագայ դիպուածում։ Դիցուք՝ թէ մանուկն սենեկի մէջ խաղալոյ ժամանակին կոտրեց մի թանգագին իր։ Ծառայքն յայտնում են զայս անցքը Հօրն, և նա իսկոյն հրամայում է կոչել իւր մօտ զմանուկը։ — «Դո՞ւ կոտրեցիր այս ինչ իրը»՝ հարցանում է հայրն։ Մանուկն քանի մի րոպէ ուղիղ նայում է իւր Հօր աչքերին, և չտեսանելով ոչ բարկութիւն և ոչ անբաւականութիւն՝ լի վստահութեամբ խոստովանում է զիւր մեղքը։ — «Եթէ միւս անգամ ևս պատահի քեզ այսպիսի անբաղդութիւն, սիրական որդի, շարունակում է հայրն, դու իսկոյն ասա ինձ, այնու համար՝ որ ծառայքն չկարծեն՝ թէ դու վախում ես խոստովանիլ, բայց այս՝ կարծում եմ ես՝ քեզ այնքան ախորժելի չթուիր։ Եւ եթէ սենեկի մէջ մարդ մի ևս չլինի՝ մի խաղար։ Այժմ համբուրէ զիս և գնա, ցեր ընդ քիչ»։ Հաւատացէք, մանուկն զիւր Հօր այս հրամանը երբէք չմոռանար, միայնակ սենեկի մէջ չխաղար, և եթէ երկրորդ անգամ

ևս իր մի կոտրելու լինի, ինքն առանց այլ և այլ հարկագրանաց խոստովանելու է հսրն, թէպետև ոչ առանց վշտաց և ամօթակրութեան, վասն զի խոստովանել զյանցանքը՝ այնպէս հեշտ բան չէ։ Հայրն, հասկանալով զմանկան վիշտը, ոչ թէ միայն չկիտի բարկանայ նորա վերայ, այլ և փայփայելու է զնա, և մանուկն զկնի խոստովանութեան պիտի զգայ անպատճառ իւր սրտումը մի զուարճութիւն, ուրախութիւն և թեթևութիւն։ Հայրն երբէք թոյլ չտար որդւոյն նշմարելու՝ թէ ինքն չէ հաւատում նմա, մանաւանդ այլոց առաջև։ Մեք երևեցընելով զմեզ այնպէս՝ իբր թէ հաւատում եմք մանկան ասածներին, զարթուցանում եմք նորա սրտումը փափագ արժանի լինելու մեր հաւատընծայութեան, և այսու պատճառաւ նա աշխատելու է միշտ խօսիլ ճշմարիտը։ Երկոտասանամեայ մանուկն Անգղիոյ մէջ արդէն կարելի է ասել՝ թէ անկախ է. թոյլ տալիս են նմա մանգալ միայնակ, սակաւօրեայ ճանապարհորդութեան համար ոչ ոք չէ մնածում տալ նմա ուղեկից, որովհետև յառաջ ևս վստահութիւն ունէին նորա վերայ, և աներկբայ են՝ թէ ինքն զիւր անձնը կարող է պահպանել։ Այսպէս սկսեալ՝ի մանկական ամենաքնքուշ հասակէն՝ ջօրանում է նորա բարոյական զօրութիւնն, ստանում է նա սեպհական արժանաւորութիւն անձին, ստանում է զայլոց վստահութիւնը առ ինքն, և՝ի հարկաւոր ժամանակի կարողանալու է պահպանել զինքը։ Նա հաւատում է այլոց, որովհետև այլք ևս հաւատում են ինքեան, բայց զիւր կարծիքը նա շուտ չէ փոխում, և չէ գրաււում այլոց կարծիքով։

Այո՛, ճշմարտութիւնն ունի մեծագոյն ներգործութիւն՝ի վերայ մեր կենցաղավարութեան, և՝ի վերայ մեր յարաբերութեանց առ միմեանս։ Ճշմարտութիւնն հաստատուած է հասարակական բարեգործութեանց հիման վերայ, և ուր կայ այն, անդ, առանց կասկածանաց, կարելի է անկրկնիտ լինիլ մի մարդոյ ասած խօսքերի վերայ։

Այլ աւաղ, այն մեր ճշմարտաբարոյ ախոյեանքն՝ որք խոստանում էին եգիպտոսեան քրմերը հալածելով և չինեական պարիսպները քանդելով՝ ճշմարտութեան յաղթական դրօշակ կանգնել, չկարողացան մինչև ցայժմ մեր կենցաղավարութեան վերայ մի արդիւնաւոր ներգործութիւն ունենալ.... Աւաղ եմ ասում, ըստ որում ճըշմարտի հետ խառնեցին նոքա և զոչ ճշմարիտը, և որովհետև ճշմարտութիւնն ստութեան հետ չէ կարող միաւորուիլ, որպէս և ոչ եգիպտոսեան խաւարն՝ Արարատեան գեղափայլ լուսոյ կամ արշալուսոյ հետ, և նոցա ամենայն գրուածքն անօգուտ եղեն։ Եւ բաց յա-

նօգուտ լինելոյն՝ կարող եմ ասել՝ թէ միասակար ևս եղեն, թէ որպիսի միաներ ծագած են կամ կարեն ծագուիլ յայսպիսի գրուածոց, ընթերցողն ինքնին կարող է գոնէ մասնաւորապէս գուշակել՝ ի յետագայ հատուածոցն, զորս հանած եմ ես՝ ի նամակէ բարեկամին իմոյ պ. քերովբէի Աստուածատրեան Ասլանբէգ, որ բնակում է՝ ի Սուխում–Գալէ։ Այս իմ բարեկամս՝ որում պարտական եմ մատուցանել զիմ շնորհակալութիւնը՝ իւր անաչառ գրուածոց համար, այսպէս է սկսանում զիւր նկատողութիւնքը վերոյիշեալ կերպիւ հրատարակեալ յօդուածոց վերայ։

«Հիւսիսափայլն, ասում է նա, իւր առաջին երևմամբն ոչ փոքր տարաձայնութեանց առիթ տուաւ թէ հոգևորականաց թէ աշխարհականաց թէ ուսումնականաց և թէ այլազգիակ մարդոց մէջ։ Այս Օրագիրս առաջին ամսատետրակէն սկսեալ՝ իւր ընթացքի հանգամանքը և նպատակը յայտնապէս ցոյց տուաւ, որ ըստ կարծեաց Հրատարակողին այս է. Ազգի պակասութիւնքը և անկրթութիւնը, և սորա կամ նորա տգէտ և յիմար, կամ մոլի և ամլաբիշտ լինելը հրապարակելով՝ լուսաւորութեան դուռն բանալ։ Թէպէտ և այս դիտումնս այսպիսի ընթացքով անհաճոյ, և միանգամայն անարդար և արտաքոյ խոհականութեան թուեցաւ բազմաց, և կարելի է ասել՝ բոլոր ազգայնոց (՝ի հարկէ բաց յոմանց), բայց առ ժամանակ մի լուեցին ամենեքեան, և ոչ մի հակառակ բան չտպուեցաւ, որովհետև յիշեալ Օրագրի Հրատարակիչն (պ. Ստեփանոս Նազարեանց)՝ որպէս և ես աչօքս տեսած եմ՝ ի Ղազան և՝ ի Դորպատ եղած ժամանակին, համբաւեալ ոմն գոլով իբրև լուսաւորեալ եւրոպէակիրթ մարդ, շատ լեզուների տեղեակ, յոյս կայր փոքր՝ ի շատէ՝ թէ փոխէ նա որպէս զիւր կարծիքը՝ նոյնպէս և զՕրագրի ընթացքը գոնէ յետ սակաւ ժամանակի։ Կայր արդարև այս յոյս, բայց չարդիւնացաւ։ Պ. Նազարեանցն ոչ միայն չփոխեց կամ չկասեցոյց զիւր Օրագրի այնօրինակ ընթացքը, այլ և աւելի ևս խթան տալով յառաջ վարեց. Ժողովրդականաց շատերն՝ մանաւանդ պարզասիրտքն, այնպիսիքն ասում եմ, որոց ծանր էր լսել կամ տեսանել օրպիսի և իցէ ազգային անպատուութիւն կամ նախատինք, սկսան գայթակղել և տրտնջալ»։

Օկնի այսորիկ սկսում է յառաջ բերել պ. Ասլանբէգն՝ ընդդէմ Հիւսիսափայլի գրուած յօդուածքը, զորս այս տեղ աւելորդ եմ համարում դնել, և ապա շարունակում է զիւր խօսքը այսպէս։

«Սակայն այնուհետև ևս չդադարեց Հիւսիսափայլն իւր կիզիչ քան թէ լուսաւորիչ ճառագայթները սփռել իւրաքանչիւր ամսա-

տետրակի էջերումը. բայց յայսմանէ՝ սկսաւ նաև ղազգային պատմութեան հիմունքը խախտել, այսինքն՝ սուտ և առասպելական ցուցանել, որով և արժանահաւատ ճանաչուած և յարգուած մեծանուն պատմագիրները (որոց գլխաւորագոյնն է երանելի բազմահմուտ ծերունին՝ Մովսէս Խորենացին) ստախօս և առասպելապատում համարել, հիմն դնելով միայն ոմանց օտարազգի մատենագրաց մասնաւոր, և՝ ի վաղուց հերքեալ կարծեաց վերայ, և մերժելով բոլորովին ղազգային և ղհաստակեալ հին հին աւանդութիւնքը, և զայն ամենայն գրուածքը մեր նախնի հեղինակաց՝ որոց ճշմարտախօսութիւնն աներկբայելի ճանաչուած է՝ ի բոլոր ազգէն, չասեմ և յօտարաց։ Այսօրինակ օտարոտի կարծեաց հրատարակութիւնքն՝ որք շատ և շատ ցաւեցուցիչ էին ամենայն ազգայնոց սրտերին, այլոց ևս աւելի տուին զնաղան ընդդիմաբանութիւններ գրելու հետ ղհետէ»։ (Այս տեղ՝ ի մէջ է բերում ղվ. ահան Արամեանի նամակները, և ապա շարունակում է այսպէս)։ «Այս վերջին գրուածքս (այսինքն վ. ահան Արամեանի) մինչև ցայժմ պատասխան չէն ստացած հիւսիսասիայլէն. կարելի է թէ ստանան (թէև արդէն անցած է ժամանակն), բայց Աստուած չտայ այնպիսի պատասխան ստանալ, որպէս ստացան հ. Մանդինեանցն, Ա. Արարատեանցն և Մ. Խսահակեանցն, որոց միջում բայց յանվայելչէ խօսքերից և՝ ի տգեղ բառերից (որք աւելի խօսողին անպատուաբերիւն են բերում, քան թէ այն անձանց՝ որոց վերայ է խօսքն) ուրիշ բան չկայ։ Պիտոյ է ճշմարիտը ասել. ոչ ոք չէր կարծում թէ Պ. Նազարեանցն յօժարի այնպիսի յօդուածներ խոկել իւր Օրագրի թերթերումը, վասն զի ամենքն լսած լինելով շատերից՝ թէ եւրոպական ուսմամբք վարժուած մարդ է նա, ինքնին մակաբերում էին, թէ ուրեմն և եւրոպական քննաբանութեան (կրիտիկայի) ծանօթ է. գիտէ ուրեմն, ասում էին, թէ քննութիւնն՝ գրուած բանի վերայ պիտոյ է լինի, և ոչ թէ գրող անձին վերայ. գիտէ՝ թէ պիտոյ է քննել՝ որպիսի բան է գրուածն, և ոչ թէ՝ որպիսի մարդ է գրողն, ուսում նական՝ թէ անուսումն, Համալսարանումը վարժըւած՝ թէ ներսիսեան դպրոցումը, կամ՝ թէ ուրիշ տեղ, ևն *։ Բայց յետոյ սրբա տե-

* Ցայս բանիցս երևում է՝ թէ հիւսիսասիայլն օրինաւոր շարադրած է համարում միայն զնոյն՝ զոր գրած է համալսարանի մէջ ուսումը աւարտած մարդն։ Այս հիման վերայ, իմ բարեկամաց մինն՝ խոստանում է այնպիսի համալսարանակիրթ մարդոյն տալ՝ ի վարձ քանի հազար մանէթ ևս կամենայ՝ եթէ միայն կարողանայ Ռուսերէն թարգմանել զնորին՝ անուանեալ հրաշալի աղօթագիրքը՝ երանելւոյն Գրիգորի Նարեկացւոյ, որ բաց՝ ի յիւր աբեղայական փոքրիկ և անշուք խցէն, այլ ուսումնարան չէր տեսած, ոչ համալսարան և ոչ Ակադեմիա։

Զ. Մ.

սանելով Պ. Նազարեանցի ընթացքը՝ իւրեանց յուսոյ և կարծեացը հակառակ, ոմանք զարմացան, կէսք յուսահատեցան, այլք զայրացան, շատերն տրտունջ բարձրացուցին իւրեանց մէջ, ոմանք ևս հարկ համարեցան (ինչպէս պատմեցի յառաջ) գրչի դէմ գրիչ շարժել։ Սակայն 'ի վերայ այսր ամենայնի, կարելի է դարձեալ՝ գոնէ ըստ ոմանց կարծեաց՝ յուսալ, թէ Պ. Նազարեանցն յօգուտ իւր և յօգուտ ազգին խոհեմաբար փոխէ այսուհետև զիւր Հիւսիսափայլն այսօրինակ խըրտուցիչ և բաղմաց գայթակղեցուցիչ և վշտացուցիչ ընթացքը, որ՝ ճըշմարիտը ասում եմ՝ գովուելեան արժանի բան չէ։ Իսկ Հիւսիսափայլն միւս օրագրական թերթերուն, քաց 'ի պէսպէս դիմակաւոր կամ քօղարկեալ երգիծաբանութեանց որք ակնարկում են առ այս և առ այն ոք՝ և քաց 'ի մանրալոց, այլ ինչ չէ գտանում։ Այն ամենայն գրուածքն՝ բոլորն 'ի միասին առեալ՝ կարծեմ թէ մի դանգի ևս արժէք կարող չեն ունենալ բանագէտ անձանց առաջև, ուստի և նոցա վերայ խօսելն՝ աւելորդ է»։

Ա՛յս օրերումս տպագրական մամուլի տակէն ելաւ «Նոր քնար Հայաստանի» անուամբ հինգերորդ տետրակն, որոյ մէջ պարունակուում են մեր Ազգային երգոց երկասիրութիւնքն, որպէս՝ Սէյադի, Աշըգ Շիրինի, Գիւրջի–Նաւէի, Մխակին–Բուրջևի, Թուրինջի, Ազբար Աղամի, Շամչի–Մելքոյի, Քիչևկ–Օղլանի, Ռուստամի, և այլոց։ Քնարիս այս տետրակի մէջ յառաջ քան զամենայն յերևան ելաւ մեր աչաց «Ա՜ Հայաստան» վերնագրով երգն, որ յօրինուած է յամուսնոյն բազմարգիւն քերթողին մերոյ պետրոսի Տէր Ցովսէփեան Մատաթեանց՝ Սէյադ մականուանելոյ, որոյ երգերն (որպէս անցեալ տարեգրիս մէջ ևս յիշած եմ) յոյժ գեղեցիկ են։ Արդարև քաղցր եղև մեզ ախորժանօք իմն կարդալ զայն երգը, ըստ որում յօրինուած է այն Հայ երգչի տիկնոջէն։ Եւ ով ուրեմն կարող է ասել՝ թէ մեր ազգի մէջ յառաջադիմութիւն չկայ։ Օրինակի համար՝ պատշաճ եմ համարում ընդօրինակել այս տեղ զառաջին և զվերջին տունքը նոյն երգոյն,

«Ա՜հ Հայաստան, Հայաստան,
Ընդէր կորուսեր տէրըդ.
Եղեր այլոց ապաստան,
Թշառամեց վարդ պատկերդ։
. . . . . .
«Ես եմ Սէյադի կինն,
Մատաթեան տոհմի ոսկին.
Հայրենեաց կաթոգինն,
Հաւատացէք իմ խօսքին»։

Նրգարանս այս՝ որ տպած է 12 ծալ թերթով և պարունակում է իւր մէջ 84 երես, նուիրուած է Մոսքուայի Համալսարանի Հայ Ուսանողաց՝ ի նշան շնորհակալութեան՝ ի լոյս ընծայողէն (այն է՝ ի Պ. Ոսկանայ Գէորգեան Յովհաննիսեանց), վասն թատրոնական հանդիսին, զոր ներկայացուցին նոքա Մոսքուայի մէջ Հայերէն լեզուով, որպէս պատմած եմ ճռաքաղի չորրորդ տետրակի տարեգրի մէջ։

Հայսմ ժամու՝ յորում գրում եմ ես զիմ տարեգիրը, կարծեմ՝ թէ մեր Աստուածապատիւ Սրբազնակատար Հայրապետն և կաթողիկոսն ամենայն Հայոց Տէր Մատթէոս՝ արդէն եկած լինի՝ ի Թէոդոսիա, և անտի ուղեկցութեամբ գերապատիւ Առաջնորդին մերոյ՝ Գաբրիէլի ծայրագոյն վարդապետի Այվազեան, գնացած լինի՝ ի Բէսարաբիա և՝ ի Փօթի, ուր և հանդիպելով Սրբազան Սարգիս Արքեպիսկոպոսին Ջալալեանց, թեմական առաջնորդին Տփղիսու և Խերիթի, անցած լինի դէպ՝ ի Տփղիս, և անտի ուղեւորուած Էջմիածին՝ ուր, որպէս լսում եմ, Յունիսի 14 ին պիտի կատարուի շնորհապարգեւ սուրբ օծման հանդէսն։ Մտադիր եմ վերհատուս կաթողիկոսի ճանապարհորդութեան, նոյնպէս և սուրբ օծման հանդիսի նկարագրութիւնքը՝ յաջորդ տետրակի տարեգրիս մէջ դնել, եթէ արտաքոյ կամացս մի առանձին արգելք չպատահի։ Վասն զի այժմ այսպիսի արգելքներ շատ են պատահում՝ ի պէսպէս պատճառաց, զորս ընթերցողացս յայտնել աւելորդ է, միայն զայսքանս կարելի է ասել՝ թէ՝ ի տեղի այն ամենայն ճշմարտութեանց՝ զորս չեմք կարողանում տպել, ճարակոտոր ստիպուում եմք կէտեր դնել։

Իսկ այս տեղ այսքանս յաւելացուցանել և ասել անտեղի չեմ համարում՝ որ նորին Վերհատուութիւնն դեռ՝ ի կոստանդնուպօլիս եղած ժամանակին, (որպէս իմանում եմք՝ ի լրագրաց և՝ ի նամակաց առ մեզ հասելոց), ներկայ տարւոյս Փետրուարի 7ին ընկերակցութեամբ՝ ի Ս. Էջմիածնէ հրաւիրակ եկած գերապատիւ Սրբազան Մակար Եպիսկոպոսի, (որ՝ ի նորին Վերհատուութենէն Արքեպիսկոպոսութիւն ստացաւ), և արժանապատիւ Մխիթ, Գալուստ և Անդրէաս Վարդապետաց, ևս և արքունի վառօդապետ Հայկազն Վսեմափայլ Տատեան Պօղոս-Պէյի, ներկայացած է Օգոստափառ Սուլթանին՝ կայսերական պալատին մէջ, որ Տոլմա-Պաքչէյումն է։ Նորին կայսերական Մեծափառութիւնն բարեհաճեալ է ընդունել անուանեալ կարգին առաջին աստիճանի շքանշանը պարգեւել մեր Սրբազնասուրբ կաթուղիկոսին, որպէս և զչորրորդ աստիճանի շքանշանը՝ Սրբազան Մակար Արքեպիսկոպոսին և իւրաքանչիւրոցն՝ ի նախայիշեալ վարդապետաց։ Օգոստա-

փառ Սուլթանի այսօրինակ բարեպարգև շնորհն՝ յայտնի ապացոյց և նշանակ է արդարև նորին Մեծափառութեան մեր ազգի վերայ ունեցած առանձին սիրոյն և խնամոցն.

Ա՛ռաջս Աղառնոյ պատուական ամսագրի տպագրութիւնն սկսեալ ի ցունուար ամսոյ այսր 1859 ամի, չէ շարունակուեալ ի փարիզ, այլ՝ ինչպէս հաւաստեաւ յայտնի եղած է ինձ, պիտի շարունակուի Թէոդոսիայումը յետ ոչ բազում ժամանակաց։

Մայիսի 17. 1859։ ՋԱՐՄԱՑԻ ՄՍԵՐԵԱՆՑ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Որովհետև յայս օրերս մեր մեծարոյ և ազդասէր բարեկամաց միոյն գրութեամբ յայտնի եղև մեզ, թէ մեր դուշնաքեայ վաստակն՝ ճռաքաղն Բանասիրական՝ ըստ բաւականին հաճոյական ընդունելութիւն է գտած ի մերազնեայ բնակչաց Թագաւորական քաղաքին կոստանդնուպօլսոյ, այս է՝ յուսումնական և յուսումնատենչ անձանց՝ յեկեղեցականաց և յաշխարհականաց. և թէ՝ ոմանք ևս ի նոցանէ արդէն իսկ բաժանորդ գրուած են Ամսագրին, այսու պատճառաւ ա-ելլոյդ չհամարիմք ծանուցանել՝ թէ վնասակարաւ ամսագիրը ի կ. Պոլիս կամ յայլ քաղաքս Տաճկաստանի ստանալ կամեցողն՝ կարէ բաժանորդ գրուիլ կամ պատուական Մ-ի- լրագրոյն մեծարգոյ խմբագրչի մօտ, և կամ մեր հայրենասէր բարեկամի Ղուկաս Ց. Շախնանցի մօտ, վճարելով ի տարեկան գին ղ5 ռուսական արծաթ դահեկան (մանէթ)։

ՅԱՌԱԿ

ՀԻՆ ՇԱՐԱԳՐԱՆՔ։ Ա. Յովհաննու վանական վարդապետի Տաւուչեցւոյ բացատրութիւն Աղօթից Ամբակումայ Մարգարէի (Շարաճոխ-ին, 195—199)։

ՆՈՐ ՇԱՐԱԳՐԱՆՔ։ Բ. Պատմութիւն գիւտի և փոխադրութեան նշխարաց Ս. Գրիգորի Լուսաւորչի, հանդերձ քննութեամբ (199—208)։ Գ. Վասիլ և Կարտինոս (208—215)։ Դ. Աղերս առ Խաչեցեալն (215)։ Ե. Խորհուրդ մանց (216—218)։ Զ. Զինացւոց Տօներն (218—219)։

ՀԱՑԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ (219—226)։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ (226)։

Печатать позволяется, С. Петербургъ, 13-го Мая 1859 года. Цензоръ *В. Бекетовъ*.